

# ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՒՄ

### ՌԱՖԱՅԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

**Բանալի բառեր** – անմեղության կանխավարկած, կոռուպցիա, իշխանության չարաշահում, ՀՀ քրեական օրենսգիրք, կոնվենցիա, ապօրինի հարստացում, ողջամիտ հիմնավորում

Կոռուպցիան տնտեսության ոլորտում հանցավոր աշխարհի և պետական կառույցների սերտաճումն է, ինչպես նաև քաղաքական և հասարակական գործիչների, պետական պաշտոնյաների կաշառվածությունը<sup>1</sup>:

Լայն իմաստով կոռուպցիան ընդգրկում է ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, այնպես էլ առևտրային կազմակերպություններում աշխատող ծառայողների կողմից իրենց ծառայողական կամ պաշտոնեական դիրքի ամեն տեսակի օգտագործումը անձնական կամ խմբային շահերի համար: Այսինքն՝ այն ընդգրկում է պետական ծառայության, պաշտոնատար անձանց կողմից կատարված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ, հափշտակություններ, արդարադատության և կառավարման կարգի դեմ ուղղված որոշ հանցագործություններ: Նեղ իմաստով այն ընդգրկում է հանցագործությունների այն դեպքերը, որոնք իրենցից ներկայացնում են գործարք:

Կոռուպցիան իրավաբանական հասկացություն չէ, և այդպիսի կոնկրետ հանցակազմ չկա: Այն սոցիալ-իրավական երևույթ է, որն ընդգրկում է շեղվող վարքագծի տարբեր դրսևորումներ<sup>2</sup>:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ կոռուպցիայի հասկացությունը, թեև դրա դեմ պայքարի մեկնարկը հայտարարվել է տարիներ առաջ, և Հայաստանի

<sup>1</sup> Տե՛ս **Барихин А. Б.**, Большой юридический словарь, М., 2010, էջ 361:

<sup>2</sup> Տե՛ս **Գաբրուզյան Ա. Հ.**, Կրիմինալոգիա (դասախոսություններ), Եր., 2011, էջ 76:

Հանրապետությունը ստորագրել ու վավերացրել է կոռուպցիային վերաբերող մի շարք կոնվենցիաներ:

**Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում կոռուպցիան սահմանված է հետևյալ կերպ.** «Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները»<sup>1</sup>:

Ո՛չ առանձին պետությունները, ո՛չ միջազգային կազմակերպությունները չեն կարող հաղթահարել կոռուպցիան միայնակ, առանց մեկը մյուսին աջակցելու: Կոռուպցիային հաղթելու քայլերը միանշանակ կհանդիպեն ներպետական ոլորտում բյուրոկրատիային, նույնիսկ քաղաքական կամքի առկայության պարագայում պրակտիկ փորձի, տեղեկատվության և ֆինանսական միջոցների պակասը նվազեցնում է պայքարի արդյունավետության աստիճանը: Ուստի միջազգային հանրությունը ընդունել է մի շարք կոնվենցիաներ, որոնք միասնական քայլ են ընդդեմ կոռուպցիայի:

Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի 1999 թվականի կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ կոռուպցիա է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծը<sup>2</sup>:

Հարկ է նշել, որ կոռուպցիան ավելի լայն հասկացություն է, քան կաշառակերությունը: Վերջինս բաղկացած է կաշառք տալուց, կաշառք ստանալուց և կաշառքի միջնորդությունից, մինչդեռ կոռուպցիա են համարվում նաև այլ երևույթներ, օրինակ՝ նեպոտիզմը, որը նույնիսկ քրեականացված

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2003 թվականի N 1522-Ն որոշումը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=11547>

<sup>2</sup> Տե՛ս Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա, ԵԽ, 1999, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=24512>

չէ: Այն ֆավորիտիզմի տարատեսակ է, երբ ազգականներին տրամադրվում են արտոնություններ՝ անկախ նրանց պրոֆեսիոնալ որակներից<sup>1</sup>:

Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000 թվականի կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսվում է քրեորեն պատժելի ճանաչել հետևյալ արարքները, եթե դրանք կատարվում են դիտավորությամբ.

ա) հանրային պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով որևէ անիրավաչափ նախապատվություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը հենց պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար՝ այն հաշվով, որ այդ պաշտոնատար անձն իրականացնի որևէ գործողություն կամ անգործություն իր պաշտոնական պարտականությունները կատարելիս,

բ) հանրային պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդների միջոցով որևէ նախապատվություն շորթելը կամ ընդունելը հենց պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար այն հաշվով, որ այդ պաշտոնատար անձը իրականացնի որևէ գործողություն կամ անգործություն իր պաշտոնական պարտականությունները կատարելիս<sup>2</sup>:

Հանցագործությունների կոռուպցիոն բնույթը որոշելու համար առկա է նորմատիվ հիմք, այն է՝ ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի հրամանը, որում թվարկված են ոչ միայն ՀՀ Քրեական օրենսգրքով նախատեսված 84 հանցակազմ, այլև սահմանված են այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում Քրեական օրենսգրքով նախատեսված արարքները համարվում են կոռուպցիոն բնույթի: Այդ չափանիշներն են՝

1) հանցավոր արարքը հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի, կամ առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ իրականացնող անձի կողմից կատարված լինելը,

2) հանցավոր արարքը՝ ծառայողական դիրքի ընձեռած հնարավորություններն օգտագործելով կատարված լինելը,

3) հանցավոր արարքը՝ ոչ իրավաչափ առավելություն ստանալու նպատակով՝ շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով կատարված լինելը,

4) այն հանցավոր արարքները, որոնք թեև չեն համապատասխանում վերը նշված չափանիշներին, բայց Հայաստանի Հանրապետության

<sup>1</sup> Տե՛ս Cambridge Dictionary, <https://dictionary.cambridge.org>

<sup>2</sup> Տե՛ս Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա, ՄԱԿ, 2000թ, [https://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/orgcrime.shtml](https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/orgcrime.shtml)

կողմից վավերացված միջազգային պայմանագրերով համարվում են կոռուպցիոն հանցագործություններ<sup>1</sup>:

Կոռուպցիայի դեմ 2003 թվականի կոնվենցիան<sup>2</sup> թեպետ չի տալիս կոռուպցիայի բնորոշումը, սակայն նախաբանում «ընդունում է ի գիտություն» Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի 1999թ. կոնվենցիան, ինչպես նաև Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի 1999թ. կոնվենցիան և «ողջունում» Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000թ. կոնվենցիան՝ դրանով իսկ ընդգծելով կոռուպցիային վերաբերող միջազգային անկյունաքարային պայմանագրերի դերը և միասնական մոտեցումը:

Եվ այսպես, ՀՀ Քրեական օրենսգրքում կատարված օրենսդրական փոփոխությամբ հանրապետության քրեական օրենքը լրացվել է 310.1 հոդվածով՝ «Ապօրինի հարստանալը», այն է՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են: Ստորև կներկայացվի այս հանցակազմի վերլուծությունը՝ ըստ հանցակազմի տարրերի:

Հանցագործության օբյեկտը, ինչպես կարելի է եզրահանգել հանցակազմի՝ «պետական ծառայության դեմ ուղղված հանցագործ» վերտառությամբ 29-րդ գլխում նախատեսված լինելու փաստից, պետական (հանրային) ապարատի նորմալ գործունեությունը ապահովող հասարակական հարաբերություններն են: Այն ամենից առաջ էական վնաս է հասցնում պետական իշխանության հեղինակությանը և նվազեցնում է դրա հանդեպ հանրային վստահության մակարդակը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսևորվում է դիտավորությամբ, ինչպես նշված է ապօրինի հարստանալու քրեականացման համար հիմք հանդիսացած Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդվածից:

Հանցագործության սուբյեկտը այն անձն է, ով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով ունի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Սուբյեկտային կազմը առավել որոշակիացնելու համար անհրաժեշտ է դիմել «Հանրային ծառայության մասին» օրենքին: Նշենք,

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. հունվարի 19-ի №3 հրամանը, <http://www.Prosecutor.am/myfiles/files/Hraman3.pdf>

<sup>2</sup> Տե՛ս Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, ՄԱԿ, 2003թ, <https://www.un.org/ru/documents/declconv/conventions/corruption.shtml>

որ ապօրինի հարստանալը քրեականացնելուց հետո ընդունվել է հիշյալ ոլորտը կարգավորող նոր օրենք: Հարցն այն է, որ 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը սահմանող 32-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի<sup>2</sup> 54-րդ հոդվածի, գործում է մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը: Առ այսօր այն չի կազմավորվել, ուստի, ներկայացնենք այս պահին գործող նորմերով նախատեսված հայտարարատու անձանց: Եվ այսպես, 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են բարձրաստիճան պաշտոնատար անձինք, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, ՀՀ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը և աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ղեկավարը, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ քննչական կոմիտեում ծառայության, ՀՀ քննչական կոմիտեի ղեկավարամենտի պետական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալը, ՀՀ նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարները և նրանց տեղակալները, դատական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, հատուկ ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, բացառությամբ պաշտպանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում և փրկարար ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձանց, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, դատախազները, ազգային անվտանգության մարմինների, հարկային, մաքսային ծառայությունների, քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչները, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարները, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները, գնումների բողոքարկման խորհրդի անդամները: Նշենք նաև, որ 2019 թվականի մարտի 14-ին ընդունված ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի պա-

<sup>1</sup> «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 26.05.2011), [www.arlis.am](http://www.arlis.am)

<sup>2</sup> «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 23.03.2018), [www.arlis.am](http://www.arlis.am)

հանջն է՝ մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը «Բարձրաստիճան պաշտոնատար անձ» բառերի փոխարեն կարդալ «Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, Սահմանադրական դատարանի դատավորները, Բարձրագույն դատական խորհրդի անդամները, դատավորները, փոխվարչապետները, նախարարները և նրանց տեղակալները, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը և նրա տեղակալները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, մարզերի, Երևան քաղաքի և կայազորների դատախազները, ՀՀ քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետը և նրա տեղակալները, ինքնավար և անկախ պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և անդամները, Կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, բացառությամբ տեսչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը և նրա տեղակալները, Քրեակատարողական ծառայության պետը և նրա տեղակալները, Պրոբացիայի ծառայության ղեկավարը և նրա տեղակալները, Գլխավոր հարկադիր կատարողը և նրա տեղակալները, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ղեկավարը և նրա տեղակալները, Պետական գույքի կառավարման կոմիտեի ղեկավարը և նրա տեղակալները, ՀՀ Մարդու իրավույթների պաշտպանի աշխատակազմի ղեկավարտամենտների ղեկավարները, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, վարչապետի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամները, Երևանի քաղաքապետը և նրա տեղակալները, մարզպետները և նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարները, հատուկ հանձնարարություններով դեսպանը, Անվտանգության խորհրդի քարտուղարը, գլխավոր ռազմական տեսուչը և նրա տեղակալները, Հանրապետության նախագահի խորհրդականները, մամուլի քարտուղարը և օգնականները, ԱԺ նախագահի խորհրդականները և օգնականները, վարչապետի խորհրդականները և օգնականները»:

Սրանով ևս սուբյեկտային կազմը չի եզրափակվում: 2011 թվականի «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք՝ նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որ-

դեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր անձ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնում են գույքի և եկամուտների մասին հայտարարագիր: Այսինքն՝ ապօրինի հարստանալու սուբյեկտ կարող է լինել նաև պաշտոնատար անձ չհանդիսացող անձը:

Ինչ վերաբերում է հանցագործության օբյեկտիվ կողմին, ապա առանձնացնենք, որ այն արտահայտվում է երկրնորելի գործողությունների միջոցով՝ գույքի ավելացում (և) կամ պարտավորությունների նվազում: Բայց նման գործողությունը քրեորեն պատժելի համարելու համար անհրաժեշտ է, որ այն էականորեն գերազանցի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի օրինական եկամուտները և ողջամտորեն չհիմնավորվի դրանցով:

Հարց է ծագում՝ որո՞նք են անձի օրինական եկամուտները: Պատասխանը ևս «Հանրային ծառայության մասին» օրենքում է, մասնավորապես՝ դեռևս գործող 35-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ հայտարարագրման է ենթակա նույն հոդվածի 3-րդ մասում ինչպես նախատեսված եկամտի տեսակները (աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ, շահաբաժիններ, խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտներ, ապահովագրական հատուցումներ և այլն), այնպես էլ հոդվածով չնախատեսված այլ եկամուտներ, այսինքն՝ ցանկացած եկամուտ: Հարկ ենք համարում ընդգծել, որ 2018 թվականի «Հանրային ծառայության մասին» օրենքի դեռևս ուժի մեջ չմտած 41-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում ստացված այն եկամուտը կամ դրանց հանրագումարը, որը չի գերազանցում 200 հազար ՀՀ դրամը:

Նույն հոդվածի արդեն ուժի մեջ մտած 9-րդ մասի համաձայն՝ ստացված եկամուտը չի համարվում օրինական, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, սակայն հայտարարատու անձը դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներ ստանալը կատարել է կանխիկ:

Ինչ վերաբերում է Քրեական օրենսգրքի 310.1 հոդվածում նշվող եկամուտների «օրինական» հատկանիշին, ապա վերոհիշյալ իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ օրինական եկամուտ է այն, ինչ հայտարարագրվել է, բացառությամբ օրենքով նախատեսված անկանխիկ ձևով կատարվող եկամուտների վերոգրյալ տեսակներին վերաբերող դեպքերի:

ՀՀ Քրեական օրենսգրքի 310.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարապատիկը գերազանցող գումարը (արժեքը): Շեմի սահմանումը անհրաժեշտ է այն տեսանկյունից, որ *de minimis non curat praetor* սկզբունքի համաձայն՝ օրենքը մանրուքներով չի զբաղվում, և չափազանց փոքր անհամապատասխանությունները չպետք է հետապնդվեն<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է «հաշվետու ժամանակահատված» արտահայտությանը, ապա այն, հիմք ընդունելով 2011 թվականի «Հանրային ծառայության» մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 2016 թվականին ընդունված Հարկային օրենսգրքի<sup>2</sup> 14-րդ հոդվածի 4-րդ մասը, ընդգրկում է հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածը:

Ինչ վերաբերում է «գույք» հասկացությանը, ապա այն, առաջնորդվելով Քրեական օրենսգրքի 103.1 հոդվածով, պետք է հասկանալ որպես ցանկացած տեսակի նյութական բարիքներ, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտներ, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցներ, արժեթղթեր և գույքային իրավունքներ, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթեր կամ այլ միջոցներ, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսներ, շահութաբաժիններ կամ այլ եկամուտներ, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքներ:

Կասկածի տակ չդնելով ապօրինի հարստանալու հանցակազմի տարրերի և հատկանիշների մեր կողմից կատարված վերլուծության հիմնավորվածությունը՝ պետք է նշել, որ այն դասական կերպով նկարագրված չէ, և խնդրահարույց է ՀՀ Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանվող քրեական պատասխանատվության միակ հիմքին՝ հանրորեն վտանգավոր արարքի, այսինքն՝ գործողության կամ անգործության վերաբերյալ «ավանդական» պատկերացումներին համապատասխանության հարցը: Ըստ էության, արարքը մեկնաբանվում է՝ ելնելով հետևանքից՝ անձի գույքային վիճակի և նրա օրինական եկամուտների միջև առաջա-

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8494&Reading=0>

<sup>2</sup> ՀՀ Հարկային օրենսգրք (ընդունված՝ 04.10.2016), [www.arlis.am](http://www.arlis.am)

ցած անհամապատասխանությունից, բայց չի նշվում, թե ինչ գործողություններն են հանդիսացել արդյունք նման անհամապատասխանության գոյացման համար:

Ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> 41-րդ հոդվածի՝ իրավունքի նորմը մեկնաբանելիս այն ընդունող մարմնի նպատակը հաշվի առնելու պահանջից՝ նշենք, որ օրենքի նախագծի քննարկումների ժամանակ հիմնական զեկուցողը արտահայտել է այն միտքը, որ անձը պատասխանատվություն է կրում ոչ թե գործողության, այլ «չապացուցված գործողության արդյունքում առաջացած վիճակի համար»<sup>2</sup>:

Մեր կարծիքով, այն ոչ թե բացթողում է, այլ օրենքի տեսանկյունից պահանջ՝ չտարբերակել գույքի ավելացման (և) կամ պարտավորությունների նվազման համար հիմք հանդիսացած արարքները, ինչն իհարկե թեև խստագույն մոտեցում է, բայց մեր գնահատմամբ՝ արդարացված: Կոռուպցիայի դեմ պայքարում չպետք է լինեն բացառություններ և անհարկի ծայրահեղականացված պոզիտիվիզմի դրսևորումներ, քանի որ անձի կողմից իր գույքի և եկամուտների մանրամասն հայտարարագրման համակարգը չի կարող ծառայել կոռուպցիոն հանցագործությունների կանխման և հանրային պաշտոնյանների հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման նպատակին, եթե նախատեսվեն կոնկրետ գործողություններ գույքի ավելացման կամ պարտավորությունների նվազման համար, քանզի այդ պարագայում քրեաիրավական պատասխանատվության դաշտից կարող են և դուրս մնալ դրա որոշ եղանակները, գուցե և ոչ դիտավորյալ: Մեր կարծիքով, այս հանցակազմը պետության «վերջին հույսն» է և գործիքը կոռուպցիայի դեմ: Այդ հանգամանքը հաստատվում է «եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են» օրենսդրական ինքնուրույն պայմանով, որի պահպանումը ևս անհրաժեշտ է անձին ապօրինի հարստանալը մեղսագրելու համար: Այն, կարող ենք ասել, «պահուստային» հանցակազմ է: Այսինքն, եթե կան, օրինակ՝ կաշառք ստանալու կամ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման հատկանիշներ, անձին չի կարող մեղսագրվել ապօրինի հարստանալը, և արարքը պետք է որակել բերված օրինակի դեպքում՝ համապատասխանաբար 311 հոդվածով կամ 179 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը չի սահմանափակվել Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի 2003 թվականի կոնվենցիան վավերացնելով և ՀՀ Քրեական օրենսգրքում 310.1 հոդվածը լրացնելով, այլ պատրաստվում

<sup>1</sup> «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 23.01.2018), [www.arlis.am](http://www.arlis.am)

<sup>2</sup> ՀՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 14-ի նիստի սղագրություն թիվ 2, [www.parliament.am](http://www.parliament.am)

է հետևողական լինել այս հանցակազմի կիրառման տեսանկյունից: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության դատախազության 2018 թվականի գործունեության մասին հաղորդման համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործերով անցնող, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնող անձանց վերաբերյալ նախաքննության ընթացքում պարտադիր քննության առարկա դարձնել նաև ապօրինի հարստացման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 310.1 հոդվածով նախատեսված հանցագործության առերևույթ առկայությունը<sup>1</sup>: Ինչպես նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի նախագծի համաձայն՝ 44-րդ կետով նախատեսվում է կառույցին առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում<sup>2</sup>:

Հաջորդ խնդիրը, որ բխում է մեր թեմայից, անմեղության կանխավարկածի և ապօրինի հարստանալու հարաբերակցությունն է:

Անմեղության կանխավարկածի ուժով անձի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված է մեղադրողի վրա, քանի որ պաշտպանության կողմը, որպես կանոն, իր հնարավորություններով փաստացի թույլ է, քան հանրային քրեական հետապնդման կողմը, որը կարող է օգտագործել պետության կազմակերպական և նյութական միջոցները: Սակայն իրավիճակն արմատապես փոխվում է հատուկ դեպքերում, երբ պաշտպանության կողմն օբյեկտիվորեն գտնվում է անհամեմատ ավելի բարենպաստ վիճակում, քան մեղադրանքի կողմը: Սովորաբար դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ մեղադրողը ստիպված է հերքել, այսպես կոչված, բացասական փաստերը (ինչ-որ մի փաստի բացակայությունը), որոնց վրա հենվում է պաշտպանության կողմը, հատկապես, եթե բացասական փաստերը միաժամանակ համարվում են գործով գլխավոր փաստեր<sup>3</sup>:

Նախևառաջ, անհրաժեշտ է հստակ արձանագրել, որ 2003 թվականին Նյու Յորքում ընդունված՝ Կոռուպցիայի դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազության 2018 թվականի գործունեության մասին հաղորդում, Եր., 2019, էջ 67, <http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/report-2018.pdf>

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1439/about>

<sup>3</sup> Տե՛ս **Հարությունյան Գ., Ա. Վաղարշյան**, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Եր., 2010, էջ 258:

ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող<sup>1</sup>, ուստի, նշանակում է, այդ թվում՝ կոնվենցիայի 20-րդ հոդվածը: Եթե այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, ապա այդ թվում՝ անմեղության կանխավարկածը երաշխավորող 21-րդ հոդվածին, որը, ի դեպ, գործում էր 2005 թվականի խմբագրությամբ, ուներ ավելի որոշակի ձևակերպում, առանձին կետով անդրադառնում էր մեղադրյալի կողմից իր անմեղությունը ապացուցելու պարտականություն չունենալու կանոնին՝ ի տարբերություն 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 66-րդ հոդվածի:

Չսահմանափակվելով միայն դրանով՝ հարկ ենք համարում հիշեցնել, ապացուցման տեսությունից հայտնի կանխավարկածները լինում են իրավական և փաստական: Փաստական կանխավարկածը բնորոշվում էր որպես օրենքում չամրագրված, սակայն պրակտիկայում կիրառվող, փորձի վրա հիմնված ենթադրություն: Մեր կարծիքով, ապօրինի հարստանալու դեպքում հենց հանցակազմի նկարագրության մեջ դրված է այն միտքը, որ եթե անձի գույքի ավելացումը գերազանցում է նրա օրինական եկամուտները առնվազն 5 մլն ՀՀ դրամով, և այդ գերազանցումը ողջամտորեն չի հիմնավորվում, ապա տրամաբանական եզրակացությունների կիրառմամբ կարելի է պնդել, որ այդ գույքը առնվազն չունի օրինական ծագում, և գործի բազմակողմանի քննությամբ ձեռք բերված փոխկապակցված փաստական տվյալների հիման վրա միայն կարող ենք արդեն եզրակացնել գույքի ապօրինի ծագման մասին: Նույն համատեքստում պետք է վերլուծել «որը ողջամտորեն չի հիմնավորվում» արտահայտությունը: Նախ, կարծում ենք, ողջամտությունը այն երևույթը չէ, որ միանշանակ հնարավոր լինի ապացուցել փաստական տվյալներով: Գտնում ենք, որ նման տվյալ կարող է ծառայել հանցակազմի օբյեկտիվ կողմի տարր հանդիսացող առնվազն 5 մլն ՀՀ դրամ անհամատասխանության չափը, քանի որ հենց դա է օրենսդրի կամքը, և դրա հիման վրա արված տրամաբանական դատողություններն ու եզրահանգումները կհանգեցնեն ապօրինի հարստանալու մասին հիմնավոր հետևության:

«Մեղավորության կանխավարկածի» մասին մտահոգությունները չկիսելով՝ ցանկանում ենք ներկայացնել դրա մասին մեր պատկերացումը: Մեկ կամ երկու բառ լրացնելով քրեական օրենսգրքում՝ ամենամեծ ցանկության դեպքում անգամ դժվար կլինի չեղարկել քրեական դատավարության նորմերը, մասնավորապես՝ մեղադրանքի կողմի մեղադրանքի ապացուցման պարտականության կանոնը: Ցանկացած դեպքում քրեական հետապնդման մարմինները արարքը Քրեական օրենսգրքի 310.1 հոդվածով որակելու համար նախ պետք է՝

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2006 թվականի հունիսի 30-ի թիվ 641 որոշում, [www.arlis.am](http://www.arlis.am)

1. ապացուցեն գույքի ավելացման (և) կամ պարտավորությունների նվազման հանգամանքը,
2. հաստատեն անձի օրինական եկամուտների չափը,
3. ապացուցեն դրանց միջև առնվազն 5 մլն ՀՀ դրամը գերազանցող անհամապատասխանությունը, որը ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով:

Անդրադառնալով «չի հիմնավորվում» արտահայտության կրավորական սեռով ձևակերպված լինելուն՝ նկատենք, որ օրենքը չի որոշակիացնում, թե ով պետք է հիմնավորի, և դրանով իսկ այն տանելով ողջամտության և տրամաբանության դաշտ՝ չփորձելով խախտել անմեղության կանխավարկածից բխող իր մեղավորությունը ապացուցելու պարտականություն չունենալու մեղադրյալի իրավունքը: Ստորագովիչը նշել է, որ քրեական դատավարությունում ապացուցման բեռի հարցի լուծումը այն է, որ անմեղության կանխավարկածից է բխում մեղադրողի վրա դրվող մեղադրանքի ապացուցման պարտականությունը և այն կանոնը, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, թեպետ նա ունի այդպիսի իրավունք<sup>1</sup>: Համադրելով դա խնդրո առարկա իրավիճակի հետ՝ հանգում ենք նրան, որ անձը պարտավոր չէ, բայց իրավունք ունի ինչպես ապացուցելու իր անմեղությունը, այնպես էլ ներկայացնելու իրեն արդարացնող փաստեր:

Քրեական դատավարությունում կանխավարկածի միջոցով ապացուցման բեռի բաշխման կանոնները ապահովում են տարբեր շահեր, որոնց մեջ առաջնայինը կողմերի մրցակցային հավասարությունն է: Այն կողմը, որը օբյեկտիվորեն մյուս կողմի համեմատ գտնվում է առավել թույլ, այսինքն՝ անհավասար վիճակում, կարող է պաշտպանվել կանխավարկածով: Վերջինս թույլ կողմին ազատում է իր համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցման անհրաժեշտությունից<sup>2</sup>: Տվյալ դեպքում «թույլ» ասելով պետք է հասկանալ տեղեկացվածության տեսանկյունից: Այն հանգամանքը, որը կարող է նշանակություն ունենալ անձի արարքը ապօրինի հարստանալու հանցակազմով որակելու համար, պետությանը՝ ի դեմս քրեական հետապնդման մարմինների, անհամեմատ ավելի դժվար հասանելի է, քան ինֆորմացիան տիրապետող անձին:

<sup>1</sup> Տե՛ս **Барабан А. С.**, Доказывание в уголовном процессе, учебно-методические материалы, Красноярск, 1977, էջ 1013:

<sup>2</sup> Տե՛ս **Ա. Ղամբարյան, Ն. Կարապետյան**, Անմեղության կանխավարկածի և ապացուցման պարտավորության հարաբերակցության հիմնախնդիրը իրավունքի զարգացման համատեքստում, Պետություն և իրավունք, թիվ 4 (42), 2008, էջ 20:

**Рафаел Нагапетян, Особенности принципа презумпции невиновности в делах преступлений коррупционного рода** - В статье рассматриваются коррупция как явление, международно-правовые основы борьбы с ней, уголовно-правовые характеристики состава преступления незаконного обогащения, анализируя его особенности и особенности применения принципа презумпции невиновности в этом контексте.

Отмечается, что важным пристанищем в борьбе с коррупцией стала законодательная поправка в Уголовному кодексе Республики Армения, когда уголовный закон был дополнен статьей 310.1 «Незаконное обогащение», которая предполагала, что декларант должным образом декларирует свой законный доход.

Автор приходит к выводу, что для квалификации преступления, предусмотренного статьей 310.1 Уголовного кодекса, органы уголовного преследования должны сперва: 1. доказать обстоятельство увеличения имущества и (или) уменьшения обязательств, 2. подтвердить размер законных доходов лица, 3. доказать несоответствие между ними, превышающее не менее 5 миллионов драмов РА, которое не обосновывается законными доходами.

**Rafayel Nahapetyan, Features of the principle of presumption of innocence in corruption cases** - The article considers corruption as a phenomenon, the international legal basis for combating it, the criminal legal characteristics of the offence of illicit enrichment, analysing its peculiarities analyzing some of its features and the application of the principle peculiarities of presumption of innocence in this context.

It is noted that an important place in the fight against corruption was the legislative amendment in the Criminal Code of the Republic of Armenia became an important destination in the fight against corruption, when the Criminal Law was supplemented by article 310.1 "Illicit enrichment," which assumed that the declaration properly declares its legitimate income.

The author concludes that in order to define the offence under article 310.1 of the Criminal Code, the criminal prosecution authorities must first: 1. Prove the fact of increase of property and/or decrease of liabilities, 2. Confirm the amount of legal income of the person, 3. Prove a discrepancy between them exceeding at least AMD 5 million, which reasonably is not justified by legal income.